ՀՀ ՆԳՆ ՄՀՎ ԲԵՀ բաժնի պետ՝
Ա. Արաբյանին

Հաշվետվություն

ՀՀ ՆԳՆ ՄՀՎ բազմակողմ և երկկողմ համագործակցության բաժնի
փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ
(29.05.2025 – 12.12.2025)

2025թ. մայիսի 29-ից 2025թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՀՎ բազմակողմ և երկկողմ համագործակցության բաժնի փորձագետ Մարիանա Մուրադի Գասպարյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Իրականացվել են ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասությանը վերաբերելի մասով օտարերկրյա պետությունների համապատասխան գերատեսչությունների, միջազգային կառույցների հետ համագործակցության համակարգման աշխատանքներ, երկկողմ և բազմակողմ ձևաչափով հանդիպումներ, պատվիրակությունների ընդունելություններ, խորհրդակցություններ և այլ պայմանավորվածություններ,
2. Իրականացվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին (փրկարար ծառայություն, ոստիկանություն, միգրացիայի և քաղաքացիության ծառայություն) վերաբերելի մասով միջազգային համագործակցության հետ կապված փոխգործակցության աշխատանքներ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ,
3. Իրականացվել են «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով սահմանված կարգով ՀՀ ներքին գործերի նախարարությանը վերապահված գործառույթներով աշխատանքներ (համաձայնագրերի և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրության և ներպետական համաձայնեցման հետ կապված աշխատանքներ),
4. Իրականացվել են օտարերկրյա դիվանագիտական և այլ միջազգային ներկայացուցիչների ու պատվիրակությունների հետ ՀՀ ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների պաշտոնատար անձանց հանդիպումների ու բանակցությունների համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներ,
5. Իրականացվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ուղարկվող միջազգային համագործակցությանն առնչվող փաստաթղթերի թարգմանության աշխատանքներ,
6. Իրականացվել են ՀՀ ներքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա պետական մարմինների և ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարողությունների զարգացման նպատակով օտարերկրյա

պետություններում և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող վերապատրաստման և որակավորման դասընթացներին համապատասխան աշխատակիցների մասնակցությունն ապահովող աշխատանքներ, ներառյալ փաստաթղթերի պատրաստում,

7. Իրականացվել են ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի համագործակցության շրջանակում մի շարք աշխատանքներ, ստացվել և համակարգվել է միջազգային գործընկեր կառույցներից ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովվել է ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի աշխատակիցների մասնակցությունը բազմաթիվ դասընթացներին, սեմինարներին և գործուղումներին:

8. Նախապատրաստվել են մի շարք շնորհավորական գրություններ ուղղված՝ տարբեր երկրների ներքին գործերի նախարարներին՝ նրանց ազգային տոներն ու նշանակալի պետական իրադարձությունները շնորհավորելու նպատակով:

9.Ապահովվել է փաստաթղթաշրջանառության գործընթաց՝ կապված ՀՀ քաղաքացիության մասին տեղեկատվություն ստանալու հետ,

10.Իրականացվել են տարբեր երկրների վարորդական վկայականները հայկական ազգային վարորդական վկայականներով փոխանակելու աշխատանքներ (ներառյալ տարբեր երկրների համապատասխան մարմիններին տեղեկատվական հարցումների ուղարկումը, ստացված պատասխանների համակարգումը և համապատասխան ստորաբաժանմանը փոխանցումը):

11. Իրականացվել են մի շարք աշխատանքներ կապված Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության հետ, ներառյալ գրությունների թարգմանություն, տեղեկատվության հավաքագրում, համապատասխան ստորաբաժանման իրազեկում, գործուղումների համակարգում, վիզաների համար աջակցության նամակների տրամադրում:

ՀՀ ՆԳՆ ՄՀՎ բազմակողմ և երկկողմ համագործակցության բաժնի փորձագետ՝
Մ. Գասպարյան «12» 12 2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները
գնահատում եմ «_____»

ՀՀ ՆԳՆ ՄՀՎ բազմակողմ և երկկողմ համագործակցության բաժնի պետ՝
Ա. Արաբյան «_____» «12» 12 2025թ.